փանց մօտ՝ Բզովնայ թուրքարնակ գիւղի մէջ։ Եւ այս է բարեպաշտ Բագուեցւոց միակ և մօտիկ ուխտատեղին. ուր և է նոցա մի քանիսի ամարանոցը։

Մատուռն է փոքրագիր և վայելուչ, ուր երբեմն նշանակած ուխտի օրը Վարդավառին, Աստուածածնին և սուրբ Խաչին Բագուից քահանայ է գնում և պատարագելով մխիթարում ուխտաւորաց և պատահած օրէնքները կատարում։

Մատրանս բեմի ճակատին գրուած է։

«Ես Ներսէս քահանայ շինեցի զՋրհորս. թվ. ՊՀ. (870 Հ. թիւ 1421 Փրկչական»)։

Գուցէ մատրան առաջի ջրհորն լինի, կամ սեղանի առաջի հորը, որ տեղից օրհնութեան հող են առնում ուխտաւորք։

Իսկ դրան ճակատին գրուած է.

«Կառուցաւ սուրբ Տունս շնորհօք Տեառն Աստուծոյ, ի յիշատակ սրբոյն Եղիայի և Անդրէի արդեամբք և ծախուք աստիճանաւոր Լեւոնի Գասպարեան Եաղուբեանց ի յ30 սեպտ. 1862 ամի.

Եւ ի ճակատ նորին սենեկաց.

«Ես Սահակ Ադամեանց շինեցի զերեք սենեակս 1830[1])»։

Այս մատրան մօտ նոյն Բզովնայում կայ և մի ուրիշ նոր շինած մատուռն յանուն սրբոյն Մինասայ, որ ունի արձանա» գիր այսպէս։

«Սուրբ Մինաս յիշատակ շինեցի ես կողակից

---

[1])Այս լուսանոգի Սահակի որդիքն են Բագուեցի պարոն Արգարն, Յակոբն և Յովակիմն, որոց ազնուութեան և բարեպաշտութեան համբաւը փայլում է ամեն տեղ։ Մանաւանդ Բագու. և Աբասթումանի՝ ուր խոստացել են Հայոց եկեղեցի շինել տալ. Աստուած յաջողէ։